



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՄՈՒՐԱՑԱՆԻ
«ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

ՄԵՐԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ արտահայտչամիջոցներ, համեմատություններ, հասարակական համեմատություններ, ժխտական համեմատություններ, փոխաբերական իմաստ, պատկերավորություն, արտահայտչականություն

Պատկերավորությունը գեղարվեստական խոսքի հիմնական հատկանիշներից է, որը խոսքը դարձնում է կենդանի, արտահայտիչ, զգացմունքային: Գրողը խոսում է պատկերներով, օգտվում լեզվաոճական միջոցներից՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, աստիճանավորում, չափազանցություն և այլն, որոնք նպաստում են խոսքի արտահայտչականությանը և պատկերավորությանը: Ցանկացած գեղարվեստական ստեղծագործության մեջ մեծ է պատկերավորման միջոցների դերը, և դա պատահական չէ, քանի որ գրականությունը պատկերավոր մտածողություն է: Այս առումով հետաքրքիր համեմատություն է արել Բեյլինսկին՝ գրելով. «Փիլիսոփան խոսում է սիլլոգիզմներով, պոետը՝ կերպարներով և պատկերներով... Քաղաքատնտեսագետը, զինվելով վիճակագրական թվերով, ապացուցում է՝ ներգործելով իր ընթերցողների մտքի վրա... Պոետը, զինվելով իրականության կենդանի և վառ պատկերացմամբ, ճշմարիտ պատկերով ցույց է տալիս՝ ներգործելով իր ընթերցողների երևակայության վրա... Մեկը ապացուցում է, մյուսը ցույց է տալիս, և երկուսն էլ համոզում են, միայն թե մեկը՝ տրամաբանական փաստարկներով, մյուսը՝ պատկերներով» (Բեյլինսկի 1956: 468):

Պատկերավորման միջոցներից է համեմատությունը, որի չափավոր, տեղին և դիպուկ գործածությունը խոսքը դարձնում է գունեղ, տպավորիչ: «Համեմատությունը երկու առարկաների կամ երևույթների համադրումն է՝ նրանցից մեկը մյուսի նմանությամբ կամ տարբերությամբ բնորոշելու համար» (Խլղաթյան 2000: 89):

Համեմատություններն արտահայտվում են շաղկապներով և շաղկապական բառերով՝ *ասես, ասես թե, կարծես, կարծես թե, ոնց որ, ինչպես* և այլն, կապերով՝ *պես, նման, իբրև, զերդ, հանգույն* և այլն: Լինելով պատկերավոր մտածողության յուրահատուկ ձևեր՝ համեմատությունները զգացական լիցք են հաղորդում խոսքին:

Համեմատության մեջ հիմնականում ընդգծվում է համեմատվող առարկաների ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համեմատումը: Երբեմն էլ համեմատությունը կապված է հեղինակի վերաբերմունքի, նրա հոգեվիճակի հետ: Կարևոր նշանակություն ունի հեղինակի վերաբերմունքը համեմատվող առարկայի, երևույթի կամ անձնավորության նկատմամբ (տե՛ս Եզեկյան 1975: 158):

Ինչպես պատկերավորման մյուս միջոցները, այնպես էլ համեմատությունները Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում առանձնահատուկ տեղ ունեն: Մուրացանը համեմատությունները գործածում է բազմաթիվ նրբերանգներով, ոճական զանազան կիրառություններով: Մուրացանյան համեմատությունների գլխավոր հատկանիշն այն է, որ դրանց մեծ մասում համեմատության երկրորդ եզրը կոնկրետ առարկա է, որի շնորհիվ համեմատվող եզրն ավելի որոշակի է դառնում, թանձրացական նշանակությունը շոշափելի և տեսանելի է դարձնում առարկան: Ահա այդպիսի օրինակներ. «Գեշի հոտ են առել թշվառականները և հավաքվել են, **ինչպես անգղներ» (Մուրացան, Գևորգ Մարզպետունի, էջ 143)¹:**

«Գարդմանա զորքերը ցրվել էին **անհովիվ ոչխարների պես...**» (էջ 111): «Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող՝ հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե, **ինչպես մի հոգատար պարտիզպան...**» (էջ 434):

Շատ են այն համեմատությունները, որոնց մի եզրում մարդն է, իսկ մյուսում՝ բնությունը՝ բոլոր դրսևորումներով: Այս երևույթը գեղարվեստական գրականության մեջ հաճախադեպ է: «Գեղարվեստական գրականության մեջ հաճախ է պատահում, երբ անհատի բնավորության առանձին գծեր, հոգեկան խայտանքները կամ մարմնական առանձին եզրերը ավելի պատկերավոր նկարագրելու համար զուգահեռ է անցկացվում դրանց և բնական համապատասխան երևույթների միջև» (Պապոյան 1970: 241):

Այսպես՝ Սահականույշ թագուհու արտաքին և ներքին հատկանիշները Մուրացանը ներկայացրել է՝ հպարտ բնավորությունը համեմատելով բարձրաբուն կաղնու հետ, նուրբ գեղեցկությունը՝ քնքուշ ծաղկի հետ: «Ես հպարտ էի այդ ժամանակ, **ինչպես լեռան կրծքին բուսած բարձրաբուն կաղնին**» (էջ 29): «...Նրան յուր հոր տանը պահել, մեծացրել էին այնպես փափուկ, **ինչպես արքայական բուրաստանի գողտրիկ շուշան...**» (էջ 31): «Դու դեռ նորատի աղջիկ էիր և ապրում էիր

¹ Այսուհետև կնշվի համապատասխան էջը:

հորդ ապարանքում ուրախ ու անհոգ, **ինչպես զարնան առավոտի նորաստեղծ մի թիթեռնիկ...**» (էջ 28): Այս համեմատությունները, բացի պատկերավոր լինելուց, օժտում են հերոսին դրական հատկանիշներով: Վեպին հուզական լիցք են հաղորդում թագուհու տխուր հոգեվիճակը բնութագրող համեմատությունները՝ ընթերցողին փոխանցելով հերոսի տրամադրությունը: Ահա այդ նախադասությունները. «Աշխարհի վրա նայում եմ, **կարծես դագաղի միջից...** Մի՞թե ես ապրում եմ» (էջ 215): «Ավա՛ղ,ինձ թվում էր՝ այլևս սեր չկա ոչ մի տեղ, նա ցամաքել, չորացել է ամենի սրտում, **ինչպես հովտի այն ծառերը**, որոնց զարնում է խորշակ» (էջ 215):

Արտահայտչականությունը գերիշխում է հատկապես այն համեմատություններում, որոնց հիմքում ընկած է արտաքին ֆիզիկական հատկանիշների նմանությունը, «...քանի որ դրանք ընթերցողի մեջ առաջացնում են տեսողական մտապատկերներ» (**Մադանյան 2012:99**), ինչպես այս նախադասություններում. «Մենք բարձրացանք, **ինչպես այծյամ...**» (էջ 66): «Հինավուրց մայրիներն ու կաղամախիները, սրաբերան տապարների հարվածներին չդիմանալով, ահագին ճարճատմամբ խոնարհում, ընկնում էին, **ինչպես մեռնող հսկաներ**» (էջ 144): «**Ինչպես սովալլուկ գազաններ** ներս խուժեցին դրանք մեր երկիրը՝ դիմացները արգելք չգտնելով» (էջ 566): «Բայց երբ թագավորը հրամայեց նահանջել, նրա մարմնով տհաճության դող անցավ, հզոր բազուկը կարկամեց, և արյունոտ սուրը կախվեցավ նրա ձեռքում **ինչպես մի անզոր գործիք**» (էջ 158): Թեև նմանօրինակ նախադասությունները քիչ չեն, բայց ավելի գերիշխող են ներքին հատկանիշների նմանության վրա հիմնված համեմատությունները:

Մուրացանի համեմատությունները պատահական չեն ստեղծվել: Դրանք հմուտ գեղագետի մտածողության հետևանք են: Աշոտ թագավորի հոգեվիճակը ներկայացնող նախադասության մեջ ծանր մտքերը հեղինակը համադրել է սևաթույր ամպերի հետ՝ ավելի խորհրդավոր, ազդեցիկ դարձնելով պատկերը: Այսպես՝ «...Կամենում էր կարծես վանել տխուր մտածմունքները, որոնք **սևաթույր ամպերի նման**, գալիս ժողովվում էին այդտեղ՝ յուր սիրտը հուզելու» (էջ 252): Առավել հուզական է պատկերը թագուհու հոգեվիճակը բնութագրող նախադասություններում: Մուրացանի համեմատությունները գեղագիտական արժեք չէին ունենա, եթե դրանք առարկաների և երևույթների սոսկ համադրում լինեին: Այստեղ միահյուսվել են արտահայտչականությունն ու հուզականությունը՝ ընթերցողին ընդգրկելով պատումի մեջ: Ահա այդ նախադասությունները. «Մի գաղտնի հուզմունք անցավ նրա սրտից **ինչպես մի կայծակ**, և նրա հոգին

խոռվվեցավ **նման ծովափնյա ջրին**, որի մեջ հանկարծ գլորվում է լեռան կողմերից պոկված մի քարաժայռ» (էջ 24): «**Նա նմանվում էր մի խեղդվող մարդու**, որ ալիքների հետ երկար կռվելուց ու ոգորելուց հոգնած, հանձնում է իրան վերջապես հոսանքի կամքին...» (էջ 204): Հուզմունքը, կայծակի հետ համեմատվելով, ավելի է ընդգծել թագուհու հոգու խոռվիքը:

Հատկապես տպավորիչ են այն համեմատությունները, որոնք ավելի են ընդգծում բնության երևույթների ուժը: Աշոտ Երկաթի և նրա զորքի քաջությունը, առնակությունը, ուժը Մուրացանը պատկերել է՝ նրանց համեմատելով բնության հուժկու երևույթների հետ: Այսպես՝ «...Հառաջապահ հեծյալների գունդը, սպիտակ դրոշը ծածանելով, **թռչում էին հողմի պես...** Նրանց հետևում էր արքան, շրջապատված յուր գեղահասակ թիկնապահներով, որոնց փայլուն զրահները շողշողում էին և **կարծես իրանց շուրջը կայծակներ թոթափում**» (էջ 66): «**Ինչպես հանկարծահաս մի փոթորիկ** թափվեցան նրանք արաբացիների վրա»: (էջ 389): Հեղինակի ընդգծված դրական վերաբերմունքը նկատելի է այս համեմատության մեջ՝ «Հայոց զորքի սրընթաց հարձակումը **բնության երևույթներիի նման ահարկու է**»: Թշնամու բանակի հարձակման ժամանակ հեղինակի վերաբերմունքը կտրուկ փոխվում է. համեմատությունն ունի վառ արտահայտված բացասական դրսևորում, ինչպես այս օրինակում. «...**Ինչպես սովալլուկ գազաններ**, ներս խուժեցին դրանք մեր երկիրը. գյուղերն ու ավաններն քանդեցին, քաղաքներն ավերեցին, եկեղեցիները հրձիգ արին...» (էջ 56): Սովալլուկ գազանների հետ համեմատությունն ավելի է ընդգծել թշնամու հանդեպ հակակրանքը:

Գեղարվեստական մեծ արժեք ունեն այն համեմատությունները, որոնց եզրերը, թվում է, իրար հետ առնչվել չեն կարող: «Հաջող համեմատության կարևորագույն հատկանիշներից մեկը, անսպասելիության, նորույթի, հնարամտության տարրն է: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հեղինակ չափազանց անհատական է համեմատությունների ընտրության և գործածության իմաստով» (Ефимов 1961:491):

Ահա այդպիսի համեմատություն կարելի է տեսնել Գառնու ամրոցը նկարագրող նախադասության մեջ. «Հարավարևելյան այս բարձրության վրա՝ ամրոցի գրեթե ծայրին, **իբրև զույգ օղաչու հսկաներ**, կանգնած էին առաջին՝ արքունական դղյակը՝ յուր մռայլ շինություններով ու ատամնավոր աշտարակներով և երկրորդ՝ Տրդատա հոյակապ հովանոցի քսանչորս հոնիական բարձրարուն սյուներով...» (էջ 4): Դղյակը օղաչու հսկաների հետ համեմատելով՝ Մուրացանը փորձել է դղյակի

ամրությունը, անառիկությունը, դոյակ մտնելու անհնարիությունը ներկայացնել: Ուշագրավ է այն հանգամանքը, որ **օղաչու** բառը հեղինակը գործածել է որպես հեղինակային նորաբանություն՝ օղում սավառնող հատկանշային նշանակությամբ: Մուրացանի ոչ մի համեմատություն ինքնանպատակ չէ: Դրանք բխում են նյութի բովանդակությունից և իրավիճակից: «Համեմատությունը այն դեպքում է հաջողված, երբ կենսականորեն կապված է բովանդակության հետ, երբ չի մթագնում խոսքի իմաստը, այլ հստակեցնում է այն, դարձնում ավելի պարզ» (Введенская 2005: 120):

Դրա վառ ապացույցն է այս նախադասության համեմատությունը. «Նրան հանդիպեց թագուհին, որ **պահապան հրեշտակի նման** հսկում էր արքայի քունը» (էջ 328): Թագուհու անսահման հոգատարությունը արքայի նկատմամբ, ջերմ վերաբերմունքը հեղինակը գնահատել է ըստ արժանվույն:

Խոսելով պատմավեպում գործածված համեմատությունների մասին՝ չենք կարող անտեսել կրկնվող համեմատությունները: «Պատկերավորման համակարգի վրա հատկապես բացասաբար է ազդում, երբ հեղինակը որևէ լավ կամ վատ համեմատություն կրկնում է կամ գործածում է մի քանի անգամ տարբեր առարկաների ու երևույթների վերաբերմամբ: Դրանից ոչ միայն թուլանում է նրանց ներգործուն ուժը, այլև առաջանում է միօրինակություն» (Խլղաթյան 1988: 238):

Պետք է նշել, որ Մուրացանը մեծ վարպետությամբ կարողացել է խոսուն, հուզական պատկերներ ստեղծել անգամ կրկնվող համեմատությունների միջոցով: Տարբեր իրավիճակներում նույն կամ տարբեր հերոսներին առարկայի հետ համադրումը երկի գեղագիտական փայլը չի նվազեցնում, եթե դա համապատասխանում է իրադրությանը, և ակնհայտ է համեմատվող առարկաների ընդհանուր հատկանիշը: Վեպում առյուծի հետ են համեմատվում թե՛ Աշոտ Երկաթը, թե՛ Սահակ Սևադան և թե՛ Յիկ Ամրամը: Մուրացանը Սահակ Սևադայի, Աշոտ թագավորի զորությունը, ուժը, թշնամիների ահ ու սարսափ լինելը ներկայացրել է՝ նրանց նմանեցնելով հզոր առյուծի: Մուրացանի պատկերավոր բնութագրմամբ՝ քաջությունն ու բազկի զորությունը մարդուն նմանեցնում են անապատի հզոր առյուծի, իսկ ցավը, հոգեկան ծանր վիճակները, պարտությունը, մեռությունը՝ վիրավոր առյուծի: Ահա այդ նախադասությունները. «Սահակ Սևադան հսկում էր այդտեղ, **ինչպես մի հզոր առյուծ**. Նրա համբավը ահաբեկում էր թշնամիներին և խրախուսում լքվածների սիրտը» (էջ 79): «Դու զորավոր էիր, **ինչպես անապատի առյուծը**... Որի մոնջունը դող էր հանում գազանների սիրտը...» (էջ 258): «...Մի վայրկյան միայն տեսա ես զարհուրելի

պատկերը, մոնչացի, **ինչպես անապատի առյուծը**, որ գոռում է հսկայի հարվածն առնելուց...» (էջ 359): «...**ինչպես մի վիրավոր առյուծ՝** արշավում էր երկրի այս կամ այն կողմը...» (էջ 57): Ինչպես տեսնում ենք, այս կրկնությունները բոլորովին չեն նսեմացնում երկի գեղագիտական արժեքը, այլ ընդհակառակը, միայն վկայում են Մուրացանի հեղինակի հուզական և արտահայտչական զգացողություններ փոխանցելու վարպետության մասին:

Վեպում պատկերավոր համեմատությունները հաջորդում են մեկը մյուսին: Զորավոր ազգի գոյության հիմքը հմուտ գեղագետը համարում է ընտանիքը, իսկ ընտանիքը համեմատում է այգու հետ, որի ծաղկելը կախված է հոգատար պարտիզայանից: Ահա այդ օրինակը. «Ով որ կամենում է զորավոր տեսնել յուր ազգը և հաղթող հայրենիքը, նա ամենից առաջ ընտանիքները պիտի խնամե, **ինչպես մի հոգատար պարտիզայան...**» (էջ 434):

Համեմատությունները լինում են հաստատական և ժխտական: Համեմատությունը ժխտական է այն դեպքում, «...եթե ժխտվում է համեմատության եզրերի ընդհանրությունը, համեմատելիի մեջ ժխտվում է համեմատյալի հատկանիշը» (Ավետիսյան 2015:140):

Ժխտական համեմատությունների օրինակներ վեպում քիչ կան: Ահա դրանցից մեկը. «Իշխանը, լեռան լանջերը բարձրանալով, դարձյալ սկսավ Գոռի վրա մտածել, բայց այս անգամ **ոչ իբրև թուլասիրտ հայր**, այլ **իբրև հայրենասեր զինվոր**» (էջ 270): Ժխտական համեմատությունն այս նախադասության մեջ ավելի է ընդգծել համեմատյալի հատկանիշը: Տպավորիչ են նաև այն նախադասությունները, որոնցում համեմատությունները տարվում են երկու առարկաների հետ: Այս դեպքում առարկայի նկարագրությունը ավելի ընդարձակ և ամբողջական է, «**ինչպես լեռնային մի հեղեղ, ինչպես գարնանազայր մի փոթորիկ**, այսպես անցավ նա մեր դաշտերից» (էջ 34):

Վեպում հանդիպում են առավելական համեմատությունների հրաշալի օրինակներ: «Առավելական ենք կոչում այն համեմատությունը, որի մեջ համեմատվող առարկան իր հատկանիշներով ավելի բարձր է ներկայացվում համեմատյալից (մերժողական դեպքում՝ ավելի ցածր)»: (Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հատոր II, Ե., 1991, էջ 14): Այսպես՝ Աշոտ-Երկաթի անզորությունը, հուսահատ վիճակը ներկայացնելիս Մուրացանը նրան համեմատում է հովտի եղեգի հետ, որը կարող է տատանվել անգամ հովի շնչից՝ օգտագործելով առավելական համեմատության դիպուկ օրինակ. «...Նա այժմ ավելի անզոր է, **քան հովտի եղեգը**, որին տատանում է նույնիսկ հովի շունչը» (էջ 257):

Կան համեմատություններ, որոնք, ժողովրդի կողմից շատ տարածված լինելով, կորցրել են հուզաարտահայտչական արժեքը, «Արտասուքը հոսեց աչքերիցս, **ինչպես աղբյուր...**» (էջ 52): «...Դիակներ, որոնք **աշնան տերևների պես** մարտկոցների բարձունքից թափվում էին աջ ու ձախ» (էջ 397): «...Նա այնպես ուրախացավ, **ինչպես մանուկ**, որ գտնում է հանկարծ յուր կորած խաղալիքները» (էջ 326):

Ամփոփելով աշխատանքը՝ նշենք, որ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը հարուստ է համեմատություններով: Գեղարվեստական վառ երևակայությամբ ստեղծված համեմատությունները պատկերավոր են, դիպուկ, ներդաշնակ են նկարագրվող իրադրությանը: Մուրացան գեղագետը մեծ վարպետությամբ է համադրել առարկաներն ու երևույթները, հոգեվիճակներն ու զգացողությունները: Կրկնվող համեմատությունները երկի գեղագիտական արժեքը չեն նվազեցնում: Պատկերավորությունն ու հուզարտահայտչականությունը ավելի շոշափելի են դառնում ճիշտ ընտրված համեմատությունների միջոցով, որոնք ընթերցողին ընդգրկում են պատումի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Յ., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Բ, Եր., 2015:
2. Բելինսկի Վ., Փիլ. ընտիր երկեր, հ. 2, Եր., 1956:
3. Եզեկյան Լ., Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Եր., 1975:
4. Խլղաթյան Ֆ., Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Ե., 1988:
5. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000:
6. Մադանյան Մ., Պատմականություն հաղորդող լեզվական միջոցները Ստ. Զորյանի պատմավեպերում, Եր., 2012:
7. Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Եր., 1982:
8. Պապոյան Ա., Պարոյր Սևակի չափաձոյի լեզվական արվեստը, Եր., 1970:
9. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հատոր II, Եր., 1991:
10. Введенская Л., Павлова Л., Катаева Е., Русский язык и культура речи, М., 2005.
11. Ефимов А., Стилистика художественной речи, М., 1961.

REFERENCES

1. Avetisyan Y., Armenian Language and Rhetorics. Book B, Y., 2015.
2. Belinsky V., Selected Philosophical Works. Vol. 2. Y., 1956.

3. Efimov A., The Style of Art Speech. M., 1961.
4. Khlghatyan F., Language and Style of Demirchyan's "Vardanank" Historical Novel. Y., 1988.
5. Khlghatyan F., Stylistic Dictionary. Y., 2000.
6. Madanyan M., Linguistic Means Imparting Historicity in Historical Novels by S. Zoryan. Y., 2012.
7. Muratsan, Gevorg Marzpetuni. Y., 1982.
8. Papoyan A., Linguistic Art of P. Sevak's Poetics. Y., 1970.
9. Poghosyan P., Fundamentals of Speech Culture and Stylistics. Vol. II, Y., 1991.
10. Vvedenskaya L., Pavlova L., Kataeva E., Russian Language and Culture of Speech, M., 2005.
11. Yezekyan L., Language and Style of Raffi's Works. Y., 1975.

МЕРИ АМБАРЯН - СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ СРАВНЕНИЙ В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ МУРАЦАНА «ГЕВОРГ МАРЗПЕТУНИ»

Ключевые слова: *изобразительные средства, образность, сравнение, экспрессивность, метафорическое значение, утвердительное сравнение*

Статья рассматривает стилистические применения сравнений, использованных в историческом романе Мурацана «Геворг Марзпетуни». Сравнения являются своеобразными проявлениями творческого мышления писателя, придают историческому роману экспрессию, эмоциональность, красочность, выразительность. В статье представлены многообразные формы и виды сравнений, использованных в романе, их различные стилистические нюансы.

MARY HAMBARYAN - THE STYLISTIC VALUE OF SIMILE IN THE HISTORICAL NOVEL "GEVORG MARZPETUNI" BY MURATSAN

Keywords: *figurativeness, comparison, simile, expressivity, metaphorical meaning, affirmative simile*

The article refers to the stylistic functions of similes applied in Muratsan's historical novel "Gevorg Marzpetuni". Being unique forms of creative thinking, the similes make the novel sound emotional, colorful and expressive. The article dwells upon diverse nuances and types of similes and their different manifestations used in the novel.

Ներկայացվել է՝ 04.03.2021
Գրախոսվել է՝ 04.03.2021